ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 10.11.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/68

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.10.2017թ. թիվ 03/26-3/18958-17 գրությամբ «Շինաշխարհ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 17.10.2017թ. թիվ ԴՎԱ/3691 գրության հիման վրա, 19.10.2017թ. թիվ 03/26-3/18958-17 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Շինաշխարհ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Շինաշխարհ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Շինաշխարհ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 30.10.2017թ. թիվ Ե-51 գրությամբ հայտնել է, որ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են:

Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Ընկերությունը վկայակոչել է նաև ՀՀ Սահմանադրության 14-րդ, 18-րդ, 42.1-րդ հոդվածները, որոնց համաձայն՝

14. Մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից:

18. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք:

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար օրենքով սահմանված հիմքերով և կարգով ստանալու մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը:

42.1. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքներն ու ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր մարդ, ում իրավունքներն ու ազատությունները, որոնք շարադրված են սույն կոնվենցիայում, խախտված են, պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք ունի, նույնիսկ եթե նման խախտումը կատարվել է պաշտոնե գործող անձանց կողմից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նման հանգամանքներ չեն, մասնավորապես, պարտականությունների խախտումը պարտապանի կոնտրագենտների կողմից, շուկայում անհրաժեշտ ապրանքների կամ պարտապանի մոտ անհրաժեշտ դրամական միջոցների բացակայությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

1. Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

2. Գնումների գործընթացին որևէ երկրի ռեզիդենտ հանդիսացող անձի (անձանց) մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում

նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ելնելով վերոգրյալ իրավական և փաստական հանգամանքներից, Ընկերությունը գտնում է, որ «Շինաշխարհ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն, քանի որ «Շինաշխարհ» ՍՊԸ-ի տնօրեն և այդ պահի դրությամբ միակ աշխատակից Աղվան Մանուկյանը գտնվել է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, ինչով պայմանավորված անհաղթահարելի ուժի ազդեցության պատճառով հնարավորություն չի ունեցել կատարելու ստանձնած պարտավորությունները, այն է՝ չի ներկայացրել Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորումը հիմնավորող փաստաթղթերը, քանի որ այդ փաստաթղթերը պատրաստելու, պատճենահանելու և կցելու համար անհրաժեշտ էր տնօրենի ֆիզիկական ներկայությունը ՀՀ-ում:

Այսպիսով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ծանուցման և այդ ծանուցման ժամկետի ավարտին Ընկերության տնօրենի կողմից ՀՀ-ից բացակայության պարագայում խախտվել է Օրենքի 6-րդ հոդվածով սահմանված պարտավորությունը, սակայն այդ խախտումը չի կարող առաջացնել պատասխանատվություն՝ այս դեպքում Ընկերությանը Ցուցակում ներառելու համար, քանի որ տվյալ պարագայում անկանխատեսելի հանգամանքների հետևանքով Ընկերությունը չի կարողացել ՀՀ պաշտպանության նախարարությանը ներկայացնել Ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ելնելով վերոգրյալից՝ «Շինաշխարհ» ՍՊԸ-ն խնդրել է Ընկերությանը չներառել Ցուցակում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 24.10.2017թ. ժամը 14:40-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերը նշված գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու) 17.10.2017թ. թիվ ԴՎԱ/3691 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-7/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում «Շինաշխարհ» ՍՊԸ-ն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից: Ընկերությանը սահմանված կարգով Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

Սահմանված ժամկետում «Շինաշխարհ» ՍՊԸ-ի կողմից պահանջվող փաստաթղթերը չեն ներկայացվել, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը, որոշել է «Շինաշխարհ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 24.10.2017թ. ժամը 14:40-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>4. ՍՑ-ԱՄ-2017/68 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՍՑ-ԱՄ-2017/68 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-7/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Շինաշխարհ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել:

2. Ընկերությունը հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-7/19» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.10.2017թ. որոշմամբ «Շինաշխարհ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին 04.10.2017թ. Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.10.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով «Շինաշխարհ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է՝ այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 19.10.2017թ. թիվ 03/26-3/18958-17 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 17.10.2017թ. թիվ ԴՎԱ/3691 գրությունը և կից փաստաթղթերը, «Շինաշխարհ» ՍՊԸ-ի 30.10.2017թ. թիվ Ե-51 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. ***խախտել է*** պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից*** պայմանագրի միակողմանի լուծմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,***

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: ***Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:***

Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի

բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-7/19» ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացրած «Շինաշխարհ» ՍՊԸ-ն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.10.2017թ. որոշմամբ ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը, առաջնորդվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներով, 04.10.2017թ. Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցել է «Շինաշխարհ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով հրավերով սահմանված կարգով և ժամկետում g.teryan@mil.am էլեկտրոնային փոստին ներկայացնել (ուղարկել) հրավերի 2-րդ մասի՝ գնանշման հարցման հայտը պատրաստելու հրահանգի 3.1 կետով նախատեսված փաստաթղթերը:

Ընկերության կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 12.10.2017թ. թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժել է, դադարեցնելով վերջինիս մասնակցությունը ընթացակարգին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Այսպիսով՝ Խորհուրդն արձանագրում է, որ «Շինաշխարհ» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն, չեն ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, որի հետևանքով Ընկերությունը «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-7/19» ծածկագրով ընթացակարգի շրջանակում խախտել է Օրենքի Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված ստանձնած պարտավորություն, և որի հետևանքով Ընկերության հետագա մասնակցությունը նշված ընթացակարգին դադարեցվել է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետը՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.10.2017թ. թիվ 03/26-3/18958-17 գրությամբ «Շինաշխարհ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00068694) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարել և «Շինաշխարհ»

ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**